



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

12 հուլիսի 2019թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Գյուլումյանի
Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով Հրանտ Մխիթարյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Հրանտ Մխիթարյանը 2019 թվականի հունիսի 25-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ կետի բ/ ենթակետը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ տրված մեկնաբանությամբ ճանաչել Սահմանադրությանը հակասող:

2. Դիմողը պնդում է, որ ժամանակին դատապարտվել է ազատագրկման, բայց պատիժը չի կիրառվել, այլ սահմանվել է փորձաշրջան երկու տարի ժամկետով, և նա պատժից ազատվել է համաներման ակտով: Այնուհետև, դիմողը դատապարտվել է կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, սակայն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժել է պատժի կրումից ազատելու վերաբերյալ դիմողի միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքը դիմողի նկատմամբ կիրառելի չէ, քանի որ նշված օրենքում «պատիժը կրելուց ազատվել» և «պատժից ազատվել» արտահայտությունները նույնական են:

Դիմողը գտնում է նաև, որ «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» 2018 թվականի նոյեմբերի 1-ի ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ կետի բ/ ենթակետում օրենսդիրն օգտագործում է «պատիժը կրելուց» արտահայտությունը, մինչդեռ ժամանակին իր նկատմամբ փորձաշրջան սահմանված լինելու պայմաններում ինքը չի կրել որևէ պատիժ, առաջին անգամ համաներման ակտով ազատվել է **ոչ թե պատիժը կրելուց, այլ պատժից**, հետևաբար՝ օրենքի վիճարկվող դրույթն **իր վրա չի տարածվում**:

Ըստ դիմողի՝ իրավակիրառ պրակտիկայում նշված նորմի մեկնաբանությունն առ այն, որ վիճարկվող նորմը **տարածվում է նաև դիմողի վրա**, հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին և հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների խախտմանը:

3. Քննվող դիմումում շարադրված վերոհիշյալ հիմնավորումների ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ դիմողն, ըստ էության, բարձրացրել է իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի իրավաչափության հարց:

Համաձայն Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, այս առումով, վիճարկվող դրույթի մասով առկա է անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Հրանտ Մխիթարյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



12 հուլիսի 2019 թվականի
ՍԴԴԿՈ-38